ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ ԱՐՏԱԿ ԶԵՅՆԱԼՅԱՆԻՆ (Ս.Թ. ՀՈՒՆԻՍԻ 17-ԻՑ 19-Ը ՓԱՐԻԶ ԵՎ Ս.Թ. ՀՈՒՆԻՍԻ 19-ԻՑ 20-Ը ՍՏՐԱՍԲՈՒՐԳ) ԵՎ ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԱՐՏԱԿ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ (Ս.Թ. ՀՈՒՆԻՍԻ 19-ԻՑ 21-Ը ՍՏՐԱՍԲՈՒՐԳ) ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գործուղված պաշտոնատար անձինք՝ Արտակ Զեյնալյան, Արտակ Ասատրյան:

Գործուղվող անձի զբաղեցրած պաշտոնները՝ ՀՀ արդարադատության նախարար, ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Ֆրանսիայի Հանրապետություն ս.թ. հունիսի 17-ից 21-ը:

Հրավիրող կողմը՝ Եվրոպայի խորհրդում Հայաստանի Հանրապետության ներկայացուցչություն:

Գործուղման նպատակը՝ Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարի տեղակալ Գաբրիելա Բատաինի-Դրագոնիի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախագահ Գուիդո Ռայմոնդիի և ԵԽ մարդու իրավունքների և օրենքի գերակայության տնօրինության ղեկավար Քրիստոս Ջիակոմոպուլոսի հետ աշխատանքային հանդիպումներ ունենալը:

Քննարկված թեմաները՝ Եվրոպայի խորհրդի աջակցությամբ իրականացվող ՀՀ արդարադատության նախարարության իրավասությանն առնչվող ծրագրերին, ՄԻԵԴ կողմից Հայաստանի Հանրապետության վերաբերյալ կայացված վճիռներին և դրանց կատարման ընթացքին, Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության, քրեակատարողական, պրոբացիայի և դատաիրավական ոլորտներում ընթացող բարեփոխումներին առնչվող հարցեր:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

ՀՀ արդարադատության նախարար Արտակ Զեյնալյանը ս.թ. հունիսի 17-ից 20-ը աշխատանքային այցով մեկնել է Ֆրանսիայի Հանրապետություն (ս.թ. հունիսի 17-ից 19-ը

Փարիզ և ս.թ. հունիսի 19-ից 20-ը Ստրասբուրգ), իսկ ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Արտակ Ասատրյանը՝ 2018թ. հոնիսի 19-ից 21-ը Ստրասբուրգ:

Ֆրանսիայի Հանրապետությունում գտնվելու ընթացքում ՀՀ արդարադատության նախարար Արտակ Զեյնալյանն աշխատանքային հանդիպում է ունեցել Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարի տեղակալ Գաբրիելա Բատահինի-Դրագոնիին: Հանդիպման ընթացքում նախարար Զեյնալյանը նշել է, որ ՀՀ կառավարությունը բարձր է գնահատում արդարադատության, մարդու իրավունքների պաշտպանության, կոռուպցիայի դեմ պայքարի, քրեակատարողական համակարգի բարեփոխումների ոլորտում Եվրոպայի խորհրդի հետ ձևավորված արդյունավետ համագործակցությունը և ընդգծել, որ Կառավարությունը պատրաստակամ է շարունակելու իրագործել Եվրոպայի խորհրդի առջև ստանձնած պարտավորությունները: Հանդիպման ընթացքում զրուցակիցներն անդրադարձել են ամփոփման փուլում գտնվող 2015-2018թթ. ԵԽ-Հայաստան Գործողությունների ծրագրին, 2019-2022 թվականների Գործողությունների ծրագրի ոլորտային առաջնահերթություններին, ինչպես նաև կոռուպցիայի դեմ պայքարին ուղղված աշխատանքներին:

Արտակ Զեյնալյանն շեշտել է հնարավորինս կարճ ժամկետներում արտահերթ խորհրդարանական ընտրություններ անցկացնելու անհրաժեշտությունը՝ նշելով, որ այն պետք է հիմնված լինի ընտրական օրենսգրքի և ընտրական համակարգի էական բարեփոխումների վրա՝ այդ համատեքստում կարևորելով Եվրոպայի խորհրդի աջակցությունը ՀՀ-ում ժողովրդավար, արդար և թափանցիկ ընտրություններ անցկացնելու գործում:

ՀՀ արդարադատության նախարար Արտակ Զեյնալյանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախագահ Գուիդո Ռայմոնդիի, ԵԽ մարդու իրավունքների և օրենքի գերակայության տնօրինության ղեկավար Քրիստոս Ջիակումոպուլոսի և ԵԽ ժողովրդավարության գլխավոր տնօրեն Սնեժանա Սամարջիչ-Մարկովիչի միջև կայանալիք հանդիպումներին մասնակցել է նաև ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Արտակ Ասատրյանը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախագահ Գուիդո Ռայմոնդիի հանդիպման ընթացքում կողմերն անդրադարձել են ՄԻԵԴ կողմից Հայաստանի Հանրապետության վերաբերյալ կայացված վճիռներին և դրանց կատարման ընթացքին: Երկուստեք ընդգծվել է, որ Եվրոպայի խորհրդի համապատասխան կառույցների հետ ակտիվ համագործակցության արդյունքում ունեցած ձեռքբերումներն ակնհայտ են:

ԵԽ Մարդու իրավունքների և իրավունքի գերակայության գլխավոր տնօրեն Քրիստոս Ջիակումոպուլոսի, ինչպես նաև ԵԽ ժողովրդավարության գլխավոր տնօրեն Սնեժանա Սամարջիչ-Մարկովիչի հետ քննարկումները ծավալվել են Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության, քրեակատարողական, պրոբացիայի և դատաիրավական ոլորտներում ընթացող բարեփոխումների շուրջ:

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ԱՐՏԱԿ ԶԵՅՆԱԼՅԱՆ